

Ապա ուրեմն դաւանեաւ: Ի հարկէ թէ մի բնութիւն կամ Բ. բնութիւն ասելն ո՛չ է բան հաւատոյ՝ այլ միայն կերպ խօսելոյ: Չոր յետ ԳՆ՝ ամաց փիլիսոփայքն քրիստոնէից մուծին ի մջ Ալկեղեցոյն: Աւրստ զանազան լեզուաց զանազանք են և բառքս, վասնորոյ ոմանք մի բնութիւն ասացին ի Վրիստոս, որպէս Մովսէսն ասաց, և այս զանազանութիւնս մնաց մինչև յօր Տեառն ևրոյ Յիսուսի Վրիստոսի: Աւ ապա յայնժամ ի բաց բարձցին զանազանութիւնք խօսելոյ և լեզուաց: Բայց որքան մնացէ զանազանութիւն լեզուաց, ո՛յ քսն ժամանակ՝ ոմանք մի ասեն, և ոմանք Բ. ըստ յատկութեան լեզուացն:

Իսկ այս միայն է որբալի. զի քրիստոնեայք որոց օրէնք եղբայրսիրութիւն է, ոչ հասկանալով զլեզուս միմեանց, անգլաւարար ատեն և անարգեն զեղբայր և կոչեն զմիմեանս հերձուածող, կարծելով միայն զինքեանս ուղղափառ. ո՛չ թէ միայն զուղղափառութիւնն իւրեանց, այլ և զՎրիստոս և զքրիստոնէութիւնս կորուսին, զի ոչ ոք կարէ քրիստոնեայ լինել թարց պահելոյ զօրէնս Վրիստոսի, որ է սէր և խաղաղութիւն ընդ միմեանս: Աւ ո՛չ ի միտ առնուն խելագարքն, թէ մեք ամենեքեանս միայն ի կերպս խօսելոյ զանաչանիմք, և ո՛չ ի բանս հաւատոյ: Աւ ոչ մտածեն թէ մեծ մեղք է քրիստոնէից՝ պատատել և վրդովել զԱլկեղեցին Վրիստոսի վասն այսպիսի իմաստասիրական բառ՝ ց:

Ասէ երկարնակն թէ՛ հայք շփոթեն զաստուածութիւն և զմարդկութիւնն Վրիստոսի՝ մի բնութիւն ասելով: Վեզ

այդպէ՛ս երևի ո՞վ երկարնակ, զի մի բնութիւնն ի լեզու քո այդպէս նշանակէ, իսկ ի լեզուս Հայոց ո՛չ է այդպէս. այլ զմիացութիւն նշանակէ:

Սապէս և միարնակն ասէ թէ՛ Աթիւնացիք բաժանեն զաստուածութիւն և զմարդկութիւնն Վրիստոսի Բ. ասելով: Վեզ այդպէս թուի ո՞վ միարնակ, զի երկուութիւնն ի լեզուս քո նշանակէ զբաժանումն, բայց ի լեզուս նոցա ո՛չ է այդպէս, այլ զանշփոթ և զանփոփոխ գոյն նշանակէ, և ո՛չ զբաժանումն:

Ահա՛ այդպէս պարտ է պատասխանել միմեանց միարնակ և երկարնակ ազգաց՝ եթէ կամէին հաճոյ լինել Վրիստոսի Տեառնն իւրեանց:

(ՄՆՆՆՆՆՆ Է ԵԵԵԵԵԵ)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԸՏՄՈՒԹԻԻՆ

ԱՆՏԻՑ ԱՆՏԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՑ ՎԱՆԻՑ

(ՇԵՇՇՇՇՇՇՇՇ)

ԳՆՈՒԽ Օ

Օգնէ Միւր Եղբայրսին յաջորդոյ և Դիպարտի անցն:

Յետ Միւրիմարայ յաջորդեաց Մարտիրոս Ապիսկոպոս Չէրքեղեանց ի Օսաղկոցաձորոյ, ի Շարիզ գեղջէ, միարան սրբոյ Աջմիածնի, այր անարար և բարեկարգ. յաւուրս սորա սուրբ Աստուածածնի եկեղեցոյ տանիսն սրբատաշ սալայատակ ծածկեցեալ է, որ ի միում արձանի գրի



այսպէս. « Ը նորհօք և ողորմութեամբն  
 Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր գան-  
 ձովն: Ի Հայրապետութեան Տեառն Վա-  
 զարու, և յառաջնորդութեան Մարտիրոսի.  
 Աստուած ողորմի ասացէք տուրք  
 և ողորմութիւն տուողացն սուրբ տանս և  
 աշխատողաց: », Արովհետեւ շարժն յա-  
 ճախ պատահի յայս կղզի, յիշեալ սաղա-  
 յատակն իսպառ իսխտեալ է յառաջ  
 քան զայս գրութիւն քանի ամօք, որ հիւ-  
 սիսակողմն առաւել փնտաւոր լինելոյն  
 զանձրեային և զձեանց ջուրան ի ներքս  
 հեղու: Հարբն ժամանակիս ցանկան ի նո-  
 րոգել, եթէ ոչ պակասէր յինքեանց հար-  
 կաւոր նիւթք և զրամ:

Եւ զկնի յիշեալ Մարտիրոսին, տե-  
 դակալ նմա եղեալ է Յովհաննէս վարդա-  
 պետի Վեղարքունւոյ՝ Նորադուզ գեղջէ.  
 զորմէ համբաւեալ է, իբր՝ Նարեկեան Մա-  
 տեանն ազօթից ծայրէ ի ծայր ի բերան  
 ունէր որպէս զՀամբարձի:

Իբրև սպանաւ յիւրոցն Թահմազ-դու-  
 լի-խան Նատր-շահ կոչեցեալ, հակառա-  
 կեալ իբերաց Պարտիկք և Աղուանք գե-  
 լէին զտահմանս միմեանց, մանաւանդ  
 զՀայաստան (1747 ՌՃՂՂՕ), մինչ զի՝  
 թիւ ելուզակացն առաւելեալ քան զտա-  
 սրն հազարս, որոց զխաւոր էր Ազատ-  
 խան կոչեցեալն, որ քանիցս աւերեցին  
 զՀայաստան:

Եւ ապա ի կրկին անգամ անյազարար  
 արձակել կամելն անօրինաց, լուեալ գա-  
 ւառականացն, ժողովն ի մէջ կղզոցս,  
 իբր յամրոցի անմատնելոյ: Յորս էին և  
 երևելիք ոմանք, որպէս Մելիք Սարգիս-  
 ճանն Վեղարքունւոյ, և Ալազվերտի  
 Իւզրաշին, այն ինքն է հայր Վարրիէլ

Իւզազաշոյն, յորժամ և Վարրիէլն էր  
 մանուկ հասակու, շուրջ զամաւ Փրկչին  
 1747 (ՌՃՂՂՕ), և ի 5 ն Յունվարի,  
 այն ինչ վասն ցրտութեան եղանակին  
 ջուրք ծովուն վասն քաղցրութեանն սա-  
 աւցեալք էին:

Տեսեալ ելուզակացն զգաւառն թա-  
 փուր ի բնակչաց, տրամին անյոյս մնալոյն  
 յայն նուազ. սպա հայեցեալ ի կղզին  
 տեսաննն զբազմութիւն արանց և կանանց  
 մանկտօքն հանդերձ ժողովեալք բացօ-  
 թեայ: Յայնժամ ուրախ սրտիւ թշնա-  
 միք պատրաստին զիմել ի վերայ սառինն  
 զալ և դերել զնոսա. յորում ժամու յե-  
 րկեղեկան ճրագարուցի՝ և Յովհաննէս  
 վարդապետն մատուցանէր զմեղսաբաւիչ  
 հրաշալի պատարագն ի գագաթան կրղ-  
 զոյն յեկեղեցւոջ սուրբ Առաքելոցն:

Օյարուցմունս թշնամեացն տեսեալ  
 Վրիստոնէից, որք արտաքոյ քան զեկե-  
 ղեցին պահապանքն էին, մտեալ ի ներքս  
 հապճեալ պատմեն վարդապետին, և խրնդ-  
 րեն ի նմանէ, ապ ինքեանց հրաման փախ-  
 չելոյ ի վերայ սառինն՝ ի ներհակ կուսե-  
 ելուզակացն զիմելոց: Իսկ նորա ստեալ  
 ջերմեանդ հաւատով զուրբ Կառն հր-  
 րաշագործ ի ձեռին իւրում, որ ասի Առ-  
 թայ-սուրբ-Նշան, զորմէ այլուր լիցի մեզ  
 պատմել, և պատուիրեալ ժողովելոցն  
 հանգարտիլ և հաւատով գարձուցանել  
 զերեսս իւրաքանչիւրոցն յարևելս հան-  
 դէպ սրբոյ Պատարագին հայցելով զօգ-  
 նութիւն յերկնից, և շտապաւ զամենայն  
 հազորդեաց մարմնոյ և արեան Տեառն մե-  
 լոյ Ախուսի Վրիստոսի, և պատրաս-  
 տեալ զամենեսեան ի մահ, յուսացուցա-  
 նելով հրաշափառ փրկութեան իւրեանց:



Յայսմ միջոցի և թշնամեացն հրնչեցուցեալ զփողս և զքնարս յարշաւանս պատերազմաց, թեւակոխեալ զճովացեալ ստուոյցն ժամանկն ի միջակէտ ճովոյն. ուրանօր եղևն երկրորդ հանդէս Մովսիսի և Փարաւոնի. քանզի անմեղ երեսայից հառաչանք և ազազակքն զիզացեալ ելին յերկինս և առ քարշեալ զգօրութիւն հզօր ձեռին և բարձր բազկի ամենակարող Արարչին, զի մի բարբանջեացեն թշնամիքն թէ՛ « Աւր է Աստուած նոցա » :

Վասնորոյ առ ժամայն, որպէս զթնդանօթս պատերազմաց՝ ահագնակոչ ճայթմամբ պատառեալ սառինն շքապատաւ կղզւոյն, որպէս զԱորիս և զՆապան, բանակաւ իւրեանց՝ զեւ կապար իջին ի ջուրս սաստիկս, և այս ոչ ի ձեռն գաւազանի նախամարգարէին Մովսիսի, այլ շնորհօք հրաշագործ սուրբ Խաչին Քրիստոսի և պատուական Մարմնոյ և Արեան իւրոյ: Արոյ՝ այսպիսի ամենակարող ձեռին զօրութեամբ զերծեալք ի մեծ վաանդէ զերութեան և մահու, գնացեալ իւրաքանչիւրոց Գեղարքունցւոց և այլոց ի տեղիս իւրեանց, զովելով և փառաւորելով զհրաշագործոցն ամենայնի զԱստուած, որ միշտ զիտէ՝ յանակնկալ պահու, ուր հատեալ է յոյս փրկութեան, հրաշագործել և զանկարն ի մէջ՝ գործել ինքնին:

Յաւուրսն յայնոսիկ, և զՎազար Աթողիկոս հրամանաւ նախարարին Արեւոնու բերեն աստ ի Աէվան յարգեւանս (1748 Ռ՝ՂՂՂ), և ի տեղի նորին զՔիւթիւր Պետրոս Ապիսկոպոսն օծանեն Աթողիկոս:

Եւ Յովհաննէս վարդապետ վերատեսու շն վանիցս, բարեպէս քաղաքավարեալ

զիւսնս իւր, ելանէ յաստեացս վերակոչմամբ Տեառն:

Փոխանորդէ զտեղի սորին՝ Անդակաւ Մինաս Աթողիկոսին՝ Սամուէլ վարդապետ, ըստ Հայոց թուին Ռ՝ՄԻ (1753), Մարտի ԺԱ. և նոյն Աթողիկոսն Մինաս նոյն թուոյ յետ երկուց ամսոց: Մայիսի 12 վախճանի, և զնի ի տեղի նորին Աղէքսանդր Ապիսկոպոս Ասասանդեուպօլսեցի:

Իսկ Սամուէլ յետ ժամանակաց հրաժարեալ յԱռաջնորդութենէն Աէվանու, յաջորդէ զտեղի նորին՝ Անդակաւ Միմօն Աթողիկոսին՝ Յովհաննէս վարդապետ մի ցովարարոյ և արբշիս, անխոյթ ի շնութեանց և ի բարեկարգութեանց:

Յաւուրս սորա կտակցեալ է Միմօն Աթողիկոսն զալ յուխտ յանապասն Աէվանու: Յովհաննէս տեսեալ թէ՛ հրնագոյն մատանիք՝ անխնամ պահպանութեամբ՝ աղճատեալք և անպիտանացեալք են, յաղազս ոչ ունելոյ զզբքատուն մի, (որպէս և ոչ մինչև ցայժմ արարեալ են զայնպիսի հողացողութիւն գրասան 1) — Յովհաննէս վարդապետ երկնչելով ի զըրասէր Միմօն Աթողիկոսէ, վասն անխնամ պահպանութեան իւրոյ զայնս, ժողովեալ զամենայն անկազմ եղեալ զհնագոյն մատանան, զտեսրակն և զյիշատակարանն՝ զիշերայն արկանէ ի ճով, որ եկեալ Աթողիկոսն զուչինչ գտանէ ի հնութեանց: Թեւեւս այսպիսի անհատունակութիւնք իցեն պատճառք, որ ոչ զըտանին աստ անցելոց ծանօթութիւնք:

(1) Այժմ ունի զզբքատուն, ինչև ներքնայարի և զկարգութիւն ցուցակ գրեանց, Ծ. Աղ. վրդ. Տալ.



Աւր ակնուենէաք և մէք գտանել զցանկալի մասեանս նախնեաց, նկատելով զհնու- թիւն տեղոյն, և զհոյակապ շնաշխարհիկ զընտրելագոյն զաստուածային արմն, որք ի սոյն անապատէ սերեալք, բայց անբարե- հոգիութիւն ոմանց, գլուսալի լուսատու տունն, յայնանապէս խաւարչաին թողեալ, որ մեզ ի ներկայ սրբակրօն և ուսումնասէր Յովհաննէս Ըսաջնորդէս յորդոր և խնդիր եղև զանցելոց զկարեւորսն մարմնացուցանել ասա ի քարտիզի, զի մի իսպառանջիշտոակ մնասցէ հռչակեալ անապատս այս. վասնորոյ և մէք զեզբայրական զբարեակեր խնդիր նորին ոչ կարացաք ապարդիւն թողուլ, ըսա կարեաց մերոց յայլ և յայլ պատմութեանց մուրացիկ եղեալ զայսքանին մարմնացուցաք ասա. ի վայելս ապագայ բանասէր հարց և եղբարց:

Երդ ժամ է և զայլ յաջորդսն նոյն Ըսաջնորդի շարագասել: Աթանաս վարդապետ Մակուեցի յԱրտաղ գաւառէ՝ փոխանորդէ զտեղին ութն ամ: Եպա Եզարիա Լպիսկոպոս Գանձասարայ, և յետ նորս Լղեազար ոմն Լպիսկոպոս Գանձասարայ. և յԱսաջնորդութեան սոյն Լղեազարայ՝ Սարգիս վարդապետ միարան Ալեկտիու (սուրբ Ղազարու վանից), յետ բազում անձկութեանց և տատապանաց ի յՋմիածնէ կալանաւորութեամբ զայ ասա ի Ավան, կացեալ թարց մարդասիրութեան իրր ամն երկու, և վերադարձեալ յՋմիածին, անտի փախտակայ անկանի ի կողմն Եխլցիսայու, և զերծանի ի տառապանաց:

Զկնի այսոցիկ Գրիգոր վարդապետ Գանձակեցի, այր անարար և աշխատասէր. յետ ութն տարի զանապատ՝ ի բա-

րեկարգութեան պահպանելոյն՝ անկանի քանի մի ճանապարհորդակից հայկազնեօք գերի ի ձեռս Լէզիկեաց, առաջի վանուցն ի մէջ Յամաքարերդի և Գոմաձորու. ընկերօքն տարեալ վաճառի ի տերութեան Ռուսաց ի Ղլար քաղաք, ինքն ազատեալ տեղոյն մերազնեօք, և վասն ընկերացն՝ ինքն Գրիգոր վարդապետ երաշխաւոր եղեալ ազատեցուցանէ և զնոսա: Եպա զայ, ի Ղուկաս Աթողիկոսէ Անդակ առեալ զնայ դարձեալ ի կողմն Եժտարխանու և Ղլարու, առ ի վճարեղ զպարտս երաշխաւորութեան զերեացն, և վախճանի ի նոյն Ղլար քաղաքի. որոյ միջոցք զերութեան, վերադարձի և վախճանի անցեալք են չորս տարիք, և բոլոր Ըսաջնորդութեան աւուրք սորա եղեալ է երկոտասան ամ, որ հասանի ի թուական Փրկչին 1805 և Հայոց ՌՄՊԻ:

ԳՂՈՒԽ Զ

Վիպոսաթ և Ֆաթան Խարդիս Վարդապետի:

Որովհետև գնալ գալ երանելի Գրիգոր Վարդապետին ի ժամանակ անիշխանութեան եթող զանապատն, և յաւուրսն յայ՛ ոսիկ, Եջմիածնի Աթողիկոսութիւնն ևս էր յերկրման և ի տառանման, ի պատճառս Գանիէլի և Գաթի յանցուածոցն, զորս բարեպէս զիտել կամեցող եզբայրն կարէ ընթեանուլ ևս յինէն զբրեցեալ պատմութիւն և կշիռն, զոր ընդ այլ գրեանց իմոց թողեալ եմ ասա ի Ավան:

Եւ զկնի գաղարկոյ այնպիսի մրրկաց, իրրե ի զերութեան վերադարձեալ բազ-



մաշարչար Գանձիկ Աթոռիկոսն ի Մարազայու ի Աշքմիածին, նշանակեալ թրւոյ Հոկա. 12 (1807), ժողովարարութեան Առնդակ՝ ի զանազան կողմնուս և ի նահանգս Տփիսիսու շնորհէ Մարգիս վարդապետին Ավանու. որ և նա այնպիսի Առնդակի զօրութեամբն, բարեպաշտ մերազնեից արօք և ողորմութեամբն պահպանէ զանապատն և զմիաբանութիւն սորա: Վանդի շրջապատ անապատիս, ի բրննութենէ կելուզակաց և Պարսկային յիշխանութեանց, ի Հայկազանց զատարկացեալ Պարսկաբնակ եղեալ էր, վասնորոյ անապատն թարց թեմի և վեճակի կայր յայնժամ, որով կարօտացեալ էր ամ ըստ ամէ վերատեսուչն շորա ի զանազան նահանգաց ժողով առնել և պահպանել զյօժարակամ մենացեալն յաշխարհէ:

Մանաւանդ՝ մեծապէս օժանդակ կացութեան սոցա էր Տփիսիս քաղաքն, ուր ունէր և զքանի մի կրպակ կամ խանութըս յիշատակ ի տեղւոյն մերազանց շրնորհեցեալ, որոց տարեկան վարձքն էին և են՝ սոյն միաբանութեան զինք զգինլեաց, նաև ի կողմն Ազգախու դռանեցեալ ազգային բարեպաշտ ժողովուրդք մեր՝ ամենայն տարի անխնայարար օգնեալ են սոցա հացեղնօք, իւրօք և պանրօք՝ ըստ այսմ օրինակի և յայլ ուրեք հասեալ են ժողովարարք սոցա, օրհնեալ ազգ մեր երբէք ոչ են խնայեալք ի սոցանէ զկարևոր օժանդակութիւն իւրեանց. քանդի իրաւամբ ճանաչեալ են զայս միաբանութիւն՝ կատարեալ ազքատք սիրոյն Վրբիստոսի, և հաղորդակիցքն կարեաց և պիտոյից սոցին՝ վերս պատուեալ են զսոսա իսկապէս Վանձապետս երանելեաց

զաւատին, և Աստուծով են իսկ. քանդի ճշմարտապէս թողեալ է սոցա զհայր, զմայր, և զայլն ըստ բանի առաքելոյն Պետրոսի, միմայն սկն ունին անսուս խոստմանն Վրբիստոսի մերոյ, ուրեմն և բաժակաւ միով ջուր ցուրտ մատուցողքն սոցա՝ ոչ լինին ասանց վարձուց, զի սոքս են կատարեալ ուշակրօք երկնաւոր վարդապետին:

Յաւուրս փանահայրութեան յիշեալ Մարգիս վարդապետի սրբութեամբ, հեղութեամբ և իմաստութեամբ փայլին քանի քանի արք Աստուածայինը, որոց տկանաւորքն էին Աստիայէլ, Միսիթար և Մակար վարդապետք:

Վախոյիշատակեալ Աստիայէլ վարդապետն ընդ ազգային թուականի ՌՄԺՎ Առջիմ. Ե, ծնեալ ի Վանձակ, զկնի զարդացման հասակին գնացեալ ի մեծ Վնապատն Տաթևու, ապա տենչալով առաւել կատարելութեան ժամանել, եկեալ ի Ավան ի ՌՄԻԿ, որ ի նմին ամի ձեռնալրեալ է Արեղոյ, անցուցանելով ըզկեանս ճշմարիտ և անկեղծ կրօնաւորութեամբ, որով եզեալ է խոստովանահայր, միանդամայն և վարժապետ կրօնաւորացն ժամանակին, որոց բարեկարգութեանն շուսաւիդք տեւեն մինչև ցայժմ աստի սուրբ Անապատիս: Ակային ներկայ միաբանք միտրերան, թէ՛ գամենայն աւուրս կենաց իւրոց՝ հացիւ և ջրով շատանայր, և ոչ զվայրկեան մի անդուցանէր թարց աղօթից և ճնրադրութեան, այլ թէ՛ սահմանեալ էր անձին իւրոյ՝ աւուրն զհազար ծուներ կրկնել: Աշրանելիս այս փոխեալ է զվեճակ կենացն սու Տէր ՌՄԱՕ, Հոկա. Ե, պանդխտեալ աստօք յիսուն և վեց ամ,



Թաղիցեալ յիւրակիրթ միաբանութեանցըն Կէփանու ի հիւսիսակողմն սուրբ Ըստուածածնի եկեղեցւոյն, որոյ աստուածահաճոյ վարուց հռչակն քարոզի ցարդի դուստս Հայաստանեաց:

Աչ պակաս քան զվարդապետ իւր, յիշատակաց արժանաւոր Մխիթար, գրասէր, բանածանօթ վարդապետն ասպաշխարութեան, տեղեալ Շամբորեցի. որոյ տեսեալ զանազատս զատարկացեալ ի սուրբ գրեանց մխիթարութեանց, հետախոյզ եղեալ՝ սասի եւ անտի ժողովեալ զարժանաւոր մասեանս նախնեաց սրբոց հարց, որպէս եւ զՄզինասարտս անուանեալ Մաղմոսացն մեկնութիւն Ամիրբօնացւոյն, սոյն Մխիթար վարդապետի հետեւողութեամբ ի ձեռս բերեալ եւ զիւրընթերց գեղեցիկ գրովք գրեալ է երանելեաց զաւտին պատգամատար Եղաւնի Վեկեանց Ըստուածատուր պատանին, որպէս եւ ինքըն վկայէ ի վերջաբանութեանն նոյն մատենին այսպէս: «Աչ զի մինչ նոյն ինքըն Մխիթար սուրբ Հայրն մեր ասկաւին կենդանին էր՝ պատուիրեաց նուստութեան մերում, որպէս զի աշխատասիրեալ միով գրչաւ աւարտ զըովանդակս ածցուք մատեան, «Ահա՛ յայտնի վկայարանութիւն գրտսիրութեան Մխիթար վարդապետիս, եւ մանաւանդ ի սուամարագրին մեր զյիշատակիսն Անապատիս, ըզ ներկայ գտանեցեալսն ունիմք յատուկ յանուանէ նշանակել, թէ՛ որոնց հետեւութեամբ՝ աշխատանօք կամ զոյլեք ժողովեալք՝ կան ի վայելս ներկայ հարց եւ եզբարց:

Արբասէր Հայրս Մխիթար, զինի միոյ տարւոյ վախճանի դատտարակ վարդապետին իւրոյ Ասպայէլէ վախճանի ի ՌՄԱԿ (1818) Մարտ ԻԸ, ըստ բանի նախաջիշատակեալ Ըստուածատուր Վեկեանի. եւ ո՛չ վասն զի յետ բազում ինչ ասուրց ախտացեալ նմա զախտ ցաւագին, ապստամբ ամենեկն ի բժշկական դեղոց, եւ անհնարին ի մարդկայնոյ լինել յօգնականութենէ, այնուհետեւ լքեալ զկենցաղըս, առ անձկալին իւր փոխեալ լինէր ի Վրիստոս, որում բազմացեալն էր ի մանկութենէ, թողլով կաթոգին զմեզ զիւրն գինի:

Հանգոյն սոցին, սրբասունուդ, աշխարհատեաց, անընչասէր, սաղմոսերգու եւ աղօթկիր Մակար վարդապետ Շամշատի նեցին, որ եղեալն իցէ իւրումն ժամանակի իրր զարդ սոյն Անապատիս, պատահական դառն մահուամբ պակասեալ յընկերակցացն իւրոց: Վանդի ի մէկն Մարտի (ՌՄՀՎ, 1825) որ էր կիւրակէ Տնտեսի, ինքն մատուցեալ զքաւչարար պատարագըն, եւ յերկուշարթի կամեցեալ գնալ յայցելութիւն Պօղոս վարդապետ ընկերակցին իւրոյ ի Համալքարերդ, ի վերայ թուլացեալ սառինն, մինչ մերձեալ է յեզըր՝ ելանել ի ցամաք, բեկեալ սառինն առեալ ընդ իւրեւ հեղձուցանէ զողորմելին, անյայտ առնելով եւ զմարմինն, որով եղեալ է անմխիթար սուգ միաբանակից եղբարցնս Բայց զինի երկուց եօթներեկաց, յերագի կամ ի տեսեան երիցս երեւեալ իւրն յատուկ սիրելի Յօհաննէս վարդապետի նարդեանս առաջնորդի, իրր մեղադիրս լինելով նմա, թէ՛ ընդէ՞ր ո՛չ բերեալ թաղէք զիս ընդ հարցն իմոց, զի ահա՛ ես կամ առ եկեղեցեաւ, ասացեալ է: Եւ լի թէ՛ առ ո՞ր եկեղեցեաւ, զայնմանէ

Արբասէր Հայրս Մխիթար, զինի միոյ տարւոյ վախճանի դատտարակ վարդապետին իւրոյ Ասպայէլէ վախճանի ի ՌՄԱԿ (1818) Մարտ ԻԸ, ըստ բանի նախաջիշատակեալ Ըստուածատուր Վեկեանի. եւ ո՛չ վասն զի յետ բազում ինչ ասուրց ախտացեալ նմա զախտ ցաւագին, ապստամբ ամենեկն ի բժշկական դեղոց, եւ անհնարին ի մարդկայնոյ լինել յօգնականութենէ, այնուհետեւ լքեալ զկենցաղըս, առ անձկալին իւր փոխեալ լինէր ի Վրիստոս, որում բազմացեալն էր ի մանկութենէ, թողլով կաթոգին զմեզ զիւրն գինի:



լուեալ: Բնկերակից շն կարծելով՝ շուրջ  
 զկողմեան, կամ հանդէպ նորին, ելեալ  
 որոնեն ի բազում տեղիս. և յո՛չ գտանե-  
 լըն՝ սգազգեաց լուեալ, յանձնելով այցելու-  
 թեան Տեսան: Աւ յանցանել ութն ամ-  
 սեալ ժամանակի, իբր հրաշիւք դայ Պար-  
 սիկ մի և ասե, յկրօնաւորան, թէ՛ ընկե-  
 րակցին ձեր մարմինն արտաքոյ կզգւոյն  
 հանդէպ եկեղեցւոյ Պանձալանից, որ ի  
 Չընկիլնի մերձ ի զիւզն Պօրտակ՝ կայ: Աւ  
 սոցա պարզեատրեալ զՊարսիկ աւեհա-  
 տուն, զնացեալ ընդ նմա, գտանեն զոմա-  
 նրս յօղուածոցն, և զհանդերձն ո՛չ իս-  
 պառ փակցեալս. ժողովեալ զմնացեալ  
 մասունն, Կազմուսիք և պաշտամամբ  
 բերեալ թաղեմ մերձ ի զերեզման Ռափա-  
 յէլ վարդապետի իւրոյ, 1825 և ի 22  
 Հոկտեմբերի ամսոյ:

Աւ արդ՝ լուի զերախօսօք և զցանկալի  
 կենօք երանելի Աստուածատուր պատան-  
 ոյ՝ ո՛չ էր մեզ արժան, մինչ իրականա-  
 պէս տեսաք զգօվանի վաստակս շնորհածոր  
 մատանց նորա, զմտեանն Եղինասարաս  
 կոչեցեալ, բոլոր մեկնութիւնն Կազմուս-  
 ցըն Վաւթի, ի Կերսիսէ Ամբրօնացւոցն  
 յորինեալ, և ի սոյն Աստուածատրէ զիւ-  
 րընթերց զեկեցկատառ օրինակեալ, հան-  
 դերձ քաղցրամ՝ շարագրութեամբ աւար-  
 տարանեալ: Աւանորոյ հարկեցաք և զը-  
 հանէ համնառօս ծանուցմամբ անցանել:

Աստուածատուրս այս՝ էր յԱրևան քա-  
 զաքի ասն երեւելոյ Վելեան կոչեցեալ  
 Յօհաննիսի որդի, որոյ կզբացրն Պետրոս  
 Վեալեան ի ներկայիս է մի յիշխանաց և  
 յերեւելեաց Արևանու: Պատանիս այս ի  
 մանկութեան զարգացեալ և դաստիարա-  
 կեալ, ո՛չ այլքան վարժապետօք, քան թէ

յատուկ շնորհօք հոգւոյն սրբոյ, սրբա-  
 կեաց վարուք, և երկնաձիր խնայաու-  
 թեամբ, իւրով յատուկ Զերմեամեղու-  
 թեամբ հրաժարեալ յամենայն հայրենի  
 փառաց և ի վայելչութեանց, մինչ ի տան  
 հօր իւրոյ էր, վարէր ընդ նոսա որպէս օ-  
 տարիկ՝ աննասն խնդութեանց և վայել-  
 չութեանց նոցին: Աբրե զայ ի սուրբ Ա-  
 նասպաս թէև նորեկ յաշխարհէ, բայց՝  
 որպէս վկայեն միաբանք ուխտիս, զբիթէ՛  
 նոր հեղինակ իմն Աստուածուսա կրթ-  
 թեալ եկեալ է առ սոսա, որ ամենեքին  
 կրօնասէր հարք հասալմամբ գրուատեն  
 զերանելիս զայս, որպէս և արդատիք պը-  
 տուղք հոգւոյն և մատանցն ի յԱղենա-  
 սարասն տեսանի, ուր ասէ այսպէս:

«Վանորոյ և մեր ի շնորհս Տեսան  
 յուսալով, փոյթ յանձին կայեալ ձեռն-  
 արկոք ի սորին գրութիւն: Աւ սկսեալ ի  
 ՌՄԱՎ մերոյս թուականէ, մինչ ցարդ,  
 յորս է թուականն մեր ՌՄԱՎ՝, սակա-  
 առ սակաւ գրեցմամբ, ահաւասիկ Տեսան  
 շնորհիւ և մաքուր ձերդ մաղթանօք, յա-  
 ւարս հասուցաք զմտեանս միանգա-  
 մայն,»:

Արդ այս երանելի շնաշխարհիկս իբ-  
 րև աւարտէ զսկսեալ մտեանն Եղինա-  
 սարաս, յորժամ և նախայիշեալ սրբա-  
 զան Հարք Ռափայէլ և Մխիթար վախ-  
 ճանեալք էին՝ զնայ ի Սէվանու ի Ախ՛ և  
 ի Աուտուց անասպասն, ուր անցուցանէ  
 զերիւս ամ ի կենաց իւրոց, և անախ զնայ  
 հեախոսա ի սուրբ Աբուսաղէմ ի անօրի-  
 նական տեղին Քրիստոսի Աստուծոյ մե-  
 րոյ՝ ուրանօր անձանօթ յամենեցունց,  
 քանի ամ զանասպան լինի՝ յորժամ երթ-  
 ևեկ ուխտաւորօք ծանուցանի ոմանց՝ թա-



գուցեալ զանձն իջանէ, ի Ախպրոս կրգի,  
 թերեւս եկեացի, ևս ի Աէվան. բայց կար-  
 ձեալ Երարչին զաշխատանս երանելի կա-  
 մաւոր ազքատացեալ Եստուածատրիս,  
 ամիրտի անդ ի Ախպրոս ի հոգեառւնն Հա-  
 յոց, որում ժառանդակիցս արասցէ իւրա-  
 քանչեւրց կշռագատողն աշխատանաց և  
 զինն ստիկար ճառատօղս:

Ահեալ են թէպէտ ի սոյն անասրատ և  
 երկու երեւելի դպիրք Բարսեղ և Մովսէս  
 անուամբք ուսումնասէրք, յետոյ մեկնեալք  
 աստի կան սրդ ի կողմն Վարարազու,  
 կրթեալք զանազան լեզուաղիտութեամբ,  
 թերեւս և վարուք:

**Եռաջնորդութիւն Յովնանէն վարդապետի**

Վարդիս վարդապետն Յոսկանասրատ  
 զեղջէ ի դաւառէն Վանձակայ կոնդակա-  
 Վանիէլ Աաթուղիկոսի տանն և մէկ տարի  
 վէջլուութեամբ կամ առաջնորդութեամբ  
 կառավարելոյն զինի զանապաան Աէվանու,  
 ինքնին կամաւորութեամբ հրաժարեալ  
 յայնմ կողմանէ, և հոնս հաճութեամբ այլ  
 միարան հարց և եղբարց հանդերձ մահ-  
 անսեօք ընտրեալք ինքեանց՝ զքաղցրա-  
 բարոյ, համեստակենցաղ, ի նահանգէն  
 Վազախու ի Հաչաջուր զեղջէ զՅովհան-  
 նէս վարդապետ Տէր Մարտիրոսեան, որ է  
 քեւորդի Արմէօն վարդապետ Եռաջնոր-  
 դին Վազախու, դաստիարակեալ ի ձեռն  
 նարդիս փայլեալ, Վարարազցի Խաչան  
 գաւառէ Յովսէփ վարդապետ Տէր Եւեփի-  
 քեանի, որ զինի տանն և եօթն ամաց հա-  
 սակի եկեալ յանասրատ Աէվանու, յա-  
 շուրս Ռափայէլ և Մխիթար և Մակար  
 վարդապետաց և Եստուածատուր Վե-

լեան Վարդի, յորոց ուսեալ զվարս և զա-  
 նապատական դպրութիւնս, եղեալ և ինքն  
 Յովհաննէս վարդապետ համեստ կացու-  
 թեամբ և առաքինասէր կրթականութեամբ  
 բնն ցանկալի և գովելի յամենեցունց:

Վասնորոյ միակամ հաճութեամբ ընտ-  
 րեալ, և ինդրանաց մահղէրս գրեալ էին  
 առ Սրբազան Աաթուղիկոսն Ափրեմ, և  
 առ Սրբազան Արնօղին Սուրբ Աջ միածնի  
 որ և սոյն պատմարանս (ինքն) ամ մի  
 յառաջ ի կողմանցն Վրիմու գալով ի  
 Սուրբ Աջ միածին կացուցեալ էին և բզ-  
 նուաստութիւն իմ անդամ նոյն Արնօղի  
 1828 ՌՄ ՀԱ:

Մէք կաթողնեալ գորով Հայաստա-  
 նեացն վանօրէից, մանաւանդ Աէվանու  
 այս սուրբ ախտի և տեսութեանն, խընդ-  
 րեալ էաք հրաման ի Աւհապետէ և ի  
 Արնօղիանն Հարց շրջել ի վանօրայան  
 ըստ բաղձանաց խնոց, որ եղէն իսկ:

Վասնորոյ յատկապէս գրեցաւ դարձ  
 ինդրագրոյ Ենասրատաւորացս վանն ա-  
 ռաջնորդութեան յիշեալ Յովհաննէս  
 վարդապետի, թէ՛ ահա Ենգամակիցն Ար-  
 նօղին մերոյ Մանուէլ վարդապետն գա-  
 լով յուխտ ի վանս ձեր, առ որ յանձնե-  
 ցաւ բարեոք վերահասու լինիլ բոլոր պա-  
 րագայից և կառավարութեան տեղւոյդ և  
 ձեր, ապա ի վերադարձման նորին զար-  
 ժանաւորն ունիմք անօրինել, ի յօգուտ  
 և ի բարեկարգութիւն ձերդ Միաբանու-  
 թեան:

Ահեալ մեր ի յիշեալ թուոյ օգոստ.  
 12 աւուրն, զվերափոխման Մօր Տեան  
 զհանդէսն, ընդ անասրատաւոր սրբոց  
 Հարց ի միասին կատարեալ և զփրկագործ  
 պատարագն յայնժամ անարժանութիւն



մեր մատուցեալ, վերագարձեալ ծանօթութեամբ և խնդրագրովք ամենեցուն ըստ առաջին հաճութեան իւրեանց:

Բայց ներկայութեամբ մերով աստ՝ տեսաք և ծանկտք, թէ՛ վասն աղքատութեան, և կամ՝ առաւել ճգնասիրութեան իւրեանց, վաղեմի սովորութիւն մնացեալ է առ միաբանութիւնն Աէվանու, զամենայն մշակական ծանր ծառայութիւնս վանուց իւրեանց՝ ինքնին անխտիր Առաջնորդք, Աշարդապետք, Աբեղայք, Աղերք և Մահտեսիք առնեն և կատարեն, ընդ հոգևորական պաշտօնից իւրեանց, որք են հացագործութիւն, խահարարութիւն, կովուց կթելն, հանդերձ այլ պարագայիւք:

Մանաւանդ և անտանելին քան զամենայն, ծանրագոյն անկերպ և անտալ նաւուցն իւրեանց՝ նաւապետն ևս այս հոգևորական միաբանութիւնն էր յամառ և ի ձմեռն, ուստի բազումք մնասեալ և ցուազարեալք են և շրջին որպէս զկիսակենդանիս: Այս նաւարարութեան պաշտօն սոցա և ինձ անտանելի երեւեալ, կամ եղև գիտել և զյօժարութիւն իւրեանց. տեսի որ վասն անձեռահասութեան և աղքատութեան զնոյն անցս տառապանաց իբր յօժարութեամբ կրեն: Ամին իրի իսկ և իսկ չորս արս քաջս և՞ աշխարհիկս վարձեալ, զիւրաքանչիւրն վեց թուման Արեանու զրամով, և մէկ ձեռք շորով, եղի աստ նաւապետ լինիլ սոցա, և զայլ մշակական ծառայութեանցն բարձողք. յայտ է թէ՛ մասնաւոր զիւրութիւնս ընկալան եղբարքն:

Ապա ժողովեալ զգրուածսն Աթոռգրիկոսացն առաջնոց և ոչ գտի զհաստա-

տուն Աոնդակ մի, յանուն ումբ առաջնորդութեան, կամ թեմից և վիճակաց յատկացեալ անուամբք նշանակեալ: Այլ կամ պատուէր և խրատ վասն պատահեալ դիպուածոյ իրիք, և կամ ժողովարարութեան պատգամք էին պատրաստի դասնեցեալքն: Հաղիւ ի բոլոր գրուածոցն հատ ու կտիր քանի մի զիւրօրէից զանուանս գտի զրեալս, որ կանուխ ժամանակաւ վիճակ Աէվանու Անապատին յորջորջեալք են, յորս յոյժ սակաւք են մերագն բնակիչք, և կամ բնաւ ոչ:

Բայց նուաստութիւն իմ խորհրդով Հարցն Աէվանու զբաւական գիւղօրէից զանուանսն գրեալ՝ ընդ իս տարի ի յԱթոռն, թէ և՞ ընկերք իմ վասն վիճման վիճակին յերկարեցին յօգոստ. ամսոյն մինչ ի հոկտ. 2. բայց վախճանն ի վերայ այնց վիճակաց հաստատեցաւ առաջնորդութիւն Հովհաննէս վարդապետին, որպէս և Աոնդակի բանքն առ այս վկայք են, ուր զրի այսպէս ,, Օ. ի հասու եղաք բարեոք վասն ամենայն ներկայ որպիսութեան և հանգամանաց Անապատիդ և վիճակի միաբանութեան ձեր, ի ձեռն բարձր — Արժանապատիւ Մանուէլ վարդապետի հարազատ որդւոյ մերոյ և սրբոյ Աթոռոյս, զոր առաքեալ էաք մեք և կառավարութիւն Աթոռոյս այդր ի վերահասութիւն: Աւազան զոր միանգամ արժան և օգուտ Անապատիդ դատեցաք, զրեմք ձեզ յատկաբար այսու Աոնդակաւ ,, : Բայց տակաւին սոյն առաջին Աոնդակաւ ոչ էին կամք նոյն Հարց հաստատել զթեմ և զվիճակն Աէվանու, որպէս ի հոկտ. 2. գրեալ Աոնդակն ոչ ցուցանէ զանուն գեղջ միոյ, վասնորո հարկ եղև ինձ այլ եղանակաւ հետեի ,



և զերկրորդ Աոնդակ առնուլ ի վերայ թեմից և վիճակաց սորա, որպէս նոյն հոկոս, 26. գրեալ Աոնդակն ցուցանել, յատուկ յանուանել, զգիւղորայս և զվիճակս սորին:

Երբայրև սոյն առաջնորդ ըստ համեստ և աստուածասէր բարուց իւրոց, եղև իսկապէս բաղդաւոր, զի ըստ այլ առաջնորդաց ոչ եղև կարօտ յօտար և ի հեռաւոր վիճակաց որպէս զմութացիկ հայթայթել զգարէնս միաբանիցն իւրոց: Ելլ ազօթիւք իւր և իւրոցն միաբանից, ողորմութեամբ Եստուծոյ և սուրբ Այսեւերն, հեղան զեղան ազգք մեր ի զանազան կողմանց և ի գաւառաց օտար Տէրութեանց, ընդ զայիսանիւ սուրբ Այսեւրութեանն, յորոց և վիճակեալ զիւզօրայքն Ավանու եղին բազմամարդ մերազն բնակչօք, և ամենքեան ջերմեանդ յօժարութեամբ արդիւնատուք են սրբոյ Անապատիս և կարօտք սրբանունդ ազօթից այսմ միաբանութեան, որ ի ներկայիս են հեռեկալքս, որ ցուցանեն անուամբք, պաշտօնէիւք և հայրենեօք:

Ծերունի Մկրտիչ և Պօղոս վարդապետք, ի գաւառէն Արտեից, այժմ՝ Վրբբուլաղ կոչեցելոյ, ի Բարձարի գեղջէն ի մանկութեանցն կրթեալք յանապատիս աշխատաւոր անձինք, հաւատարիմ Միաբանք և գործունեայք:

Աարտպետ վարդապետ Պայազեացի, այր համեստ պարկեշտաբարոյ, և խոստովանահայր միաբանութեանն, հարազատ բանակատար վանուցս:

Մարտիրոս վարդապետ Աղարշապատցի, այր հանձարեղ և արիաջան ի խօսս և ի վաստակս:

Յարութիւն վարդապետ ի Արտեից Երծնու գեղջէն, նախ քահանայ և յետ վախճանի լծակցին, ունեցելովքն եկեալ յանապատս վարել զկրօնաւորական կիսնքս:

Յօհան արեղայ Այնախեցի մտերիմ հարազատ և աշխատաւոր տանա Եստուծոյ, բայց սնբաղդ, որ ձեռնագրեալ ընդ այլ ընկերացն յանցեալ թիւ հոկ՝ 17. չև լրացուցեալ զքառասունն, վերաչուեալ ի կաճառս անմարմնոց, ուր փոխան Քրիստոսեան պատարագին, զանձն իւր պատարագեալ է:

Ալարդան արեղայ Ալաշկերտցի, աղաւնաբարոյ, հլու և հպատակ նախագահից, արի, ազօթասէր, թերևս և ընթերցասէր, քանզի միշտ զգիրսն ի ներքոյ անթի իւրոյ կրէ, այր գործունեայ ի մարմնաւոր աշխատութիւնս:

Վիկողայոս արեղայ Մաստարացի, քաղցրատեսիլ բարեհամբոյր, ձգնասէր, լուսարար սրբոյ ուխտիս, ի մարդկային կազդուբանաց տկարագոյն, բայց հօգուց կռանդիւն արի, զգաստ և սրբասէր, է ևս կազմարար մատենից սրբոյ տանս:

Անտօն արեղայ Թիֆլիզեցի, աչալուրջ խարսխորհուրդ, արագագիր, ընթերցասէր, որ խոստացեալ է՝ զայս պատմութիւն միւսանգամ իւր զեղեցիկ գծիւքն ճրել, առ ի զիւրընթերց լինել բանասիրաց, և աճանցեալ ի մէջ միաբանութեանց, զե անցնիւրքն ծանօթացին վանուց իւրեանց առաջին, միջինքն վերջին անցուածոց և բարեկարգողաց շարք և երախտաւորաց, ընդ նոսին և սրբասէր նախնեաց ի Քրիստոս հարսնացեալ ընկերակցաց:



Յարութիւն Սարկաւագ Թիֆլիզեցի,  
այր Համեստ, աղօթասէր, ընթերցող,  
ծանօթ քերականութեան, ճարտասա-  
նութեան և թուարանութեան, ժամա-  
սաց, անդադար սաղմոսերգու. բայց ցա-  
ւազնեալ մարմնական կազմուածովքն,  
ջանացող դաս ասել եռանդնոտ ընկերակ-  
ցաց:

Յակոբ Սարկաւագ Արեանցի, սրբասէր,  
արիաջան, աշխատաւոր, խաչարար Հա-  
սարակաց ի սէր եղբայրութեան:

Միքայէլ և Յովսէփ ուրարակիրք  
Թիֆլիզեցիք, պարզամիտք, աշխատասէրք,  
բարձօղք եղբարցն ծանրութեանց, թե-  
րևս մնացեալ մշակական պաշտօնից, զորս  
խափանեցէ Տէր, առ ի լինել և սոցա  
խկապէս հոգևորականք:

Արապետ Արեանցի, ի կարգս Մահ-  
տեսեաց, ի մանկութենէն կարօտ զգալի  
լուսոյ որակացն ծանօթութեանց, իմա-  
նայի լուսով զարդարեալ, բազում առա-  
քինական մասամբք (քան զիս զականա-  
ւոր կուրացեալս) զերազանցեալ, զսաղմո-  
սըն բոլոր և զժամերգութիւնն, Շարա-  
կանօք, անգիր իբր անսխալ բերան մշտա-  
մառնջ երգու առ Աստուած, և անտրր-  
տունջ վիճակի իւրում քաղցրաբան ի  
խօսակցութիւնս և եղբայրաշահ ի խրա-  
տրս:

Մահտեսի Վարրիէլ և Վրիգոր Վա-  
րաբաղցիք, արք երևելիք ի վաճառակա-  
նութեան, և այժմ իրաւամբ գովելիք, ի  
մենակեաց ճգնութեան և յաղօթս, հե-  
զահոգիք, լայնատրհուրչք, արի հսկօղք,  
առաջինն հաւատարիմ պահապան ամե-  
նայն պիտոյից քարատան, և երկրորդն՝  
խկապէս ի սուրբ Ասրեկացւոյն գովի-

ցեալ, կոչնակահար, և ժամակոչ, արի և  
արթուն, ըստ անուան իւրոյ կատարեալ  
հսկօղ, պատկառելի յամենեցունց և  
պտկաւ տիպար առ ամենեւեան:

Մելքոն Թիֆլիզեցի, բազմարուեստ,  
արի և անձանձիր աշխատաւոր ի շինուա-  
ծըս վանուց, հիւսնութեան, որմնադրու-  
թեան, մոմակազմութեան և յարակայ  
պարտիզպանութեան և իաւար տեղինաց  
անպակաս աշխատաւորութեամբ բաւա-  
կանացուցանող ամենեցունն, յետ այսպի-  
սի անդադար աշխատանացն՝ յեօթնեակ  
կարգս ժամերգութեանց անպակաս աղօ-  
թաւոր, քաղցրաձայն դպիր և անթերի  
սաղմոսերգու, առ որ ասել զարդ Անա-  
պատի ոչ է սխալիլի և իմ հոգւոյս փա-  
րելի:

Ատեփան, Սարգիս և Պետրոս Արաս-  
տանցիք, արք բարեմոյնք, հոգեսէրք, վաս-  
տակաւորք վանուցս աշխատութեամբ իւր-  
եանց, նոյնպէս և Մակար Պայազեացի  
այր աղաւնաբարոյ և աշխատաւոր. ար-  
դարև ամենեքեան սոքա քսան և երկու  
հոգևորականք ըստ օրինակի ազննական  
դրախտի իւրաքանչիւր իբր տունկ անմա-  
հութեան զանազան զունովք պտղովք,  
ճաշակաւ և հոտիւք՝ առաքինութեանց  
վայելչացուցեալ են զանապատն Սէվա-  
նու, Աստուածով և ս քան զևս վայելչա-  
ցուցեն, շնորհիւ սուրբ կայսերն Ռու-  
սաց և թագաւորին մերոյ Նիկողայ Պաւ-  
լովիչի առաջնոյ:

(Երրորդ էջ):